

Կաթողիկոսին ամենացաւալի և անակնկալ հիւանդութեան և իջմիածնի վտանգալից կացութեան վերայ, փասն զի Կաթողիկոսին հիւանդութիւնն, եթէ ստոյգ է, առաւել փնտրեալ է ազգին՝ քան թէ նրա փառ- ճանուարը։

Կարձեալ կասեմք, եթէ ստոյգ են այս տեղե- կութիւնք, ազգը պարտի աճապարիւ ապահո- վելու իջմիածնայ Կաթողիկոսութեան վարչա- կան գործոց վիճակը, փասն զի իջմիածնի բոլոր իրաւունքները կրնան փոխանցուիլ հանդիպելու և այնուհետեւ ազգին ամեն ջանքն ու աշ- խատութիւնք կարող չը լինին եղած փնտ- ները դարձանելու։

Եւ մեք կաւեցնեմք ըսել՝ գոգցես բնու- թիւն դարձեր է մեզի որ և է ծագելիք փնտքէ կամ փոխքէ առաջ անտարբեր մը- նալ, ամենկեպ նախատեսութեան, զգուշու- թեան խորհրդոց և անկեղծ դիտողութեանց կարեւորութեան չը տալ, և երբ ոմանց կողմէ նախատեսալ փնտք կամ փոխքն յառաջ գայ, այն ատեն յուզիլ, իրար անցնիլ և բարձրագոյն գոտում գոչուիներով ու աղա- զաններով օղբ թնդացնել։

Գուցէ ծանր թուին մեր այս մի քանի տողերը, բայց զմեզ մեղադրելու իրաւունք չունին, զի մեր դիտել տուած կէտը բացա- յայտ իրողութիւն մ' է փորձառութեան վրայ հիմնեալ է, և երբ իրողութիւնը կը խօսի, կանխակալ կարծիքներ պէտք է լը- առնել։

Ո՞վ գիտէ թէ Մանկունի կալիսկոսոս ին- չեր չէ գործեր՝ որք դեռ ծածկուած կը մնան և Ազգին (պաշտօնական մարմնոց) թուլութիւնէն խրախուսեալ՝ տակաւին ին- չեր պիտի չընէ և ինչ գերեր չը պիտի խաղայ Ազգին գլխուն։

Մեք իրեւ հրապարակի մարդ՝ ազգային սոյն կենսական խնդրոյն նկատմամբ Այսի մէջ մեր կարծիքն հրապարակաւ յայտնելը բաւական չը համարելով՝ որոշած եմք Ազգ- ժողովոյ մէջ ալ հարցում ուղղել առ Ազ- գային վարչութիւնն, բացատրութիւն խնդ- րելու համար թէ ինչ ըրած է այս մասին, ինչ կը խորհի, որպիսի տեղեկութիւններ ունի, և ինչ պիտի ընէ։

Ինչպէս որ կը պահանջէ մեր ազգային շահը, մեք այս մասին լռելի չը պիտի դադրեմք, մինչև որ գործոց վիճակը պար-

զուի, օրինաւոր համարադրութիւն լինի և օրինաւոր հսկողութիւն ի գործ դրուի, որովհետեւ իջմիածնի Ս. Կաթողիկոսը թէ- պէտ Ազգին ընդհանրական Կաթողիկոսն է, սակայն Ազգին առջև պատասխանատու- թիւնէ ազատ չէ երբեք և չը կրնար լինիլ քանի որ Կաթողիկոսութիւնն Ազգինն է և միայն Ազգը բացարձակ աէր է ազգային ամենայն շահուց և իրաւանց, և հետեւաբար Կաթողիկոս, Պատրիարք, Առաջնորդ, Վար- զապետ, Փաշանայ և Սարկաւագ ազգային — եկեղեցւոյ մէջ պաշտօնականներ են, ազ- գային և եկեղեցւոյ նախնական շահին ու իրաւունքներն անվճար պահպանելու պաշտօն և պարտականութիւն ունին, և ոչ թէ ըստ հաճոյս գործելու և շարժելու ազատ են։

Այնպիսի բացարձակ ազատութիւն արը- ուած չէ և ոչ մէկուն, և հարկաւ չը կրը- նար տրուիլ, քանի որ այդ պաշտօնականները մարդ են, որք կրնան սխալիլ, և հետեւա- պէս Ազգին և եկեղեցւոյ մեծ փնտ հասց- նել՝ աղէկ ընելու նպատակաւ, որ անակն- ունելի չէ։

(Լոյս)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» № 90-ի մէջ տպւած է իջմիածնի պրո- կուրորի նամակը բացատրութիւն է տալիս էջ- միածնի գումարները գործադրութեան մասին, բայց զարմանալի է որ պ. պրոկուրորը իր նա- մակի մէջ յիշում է միայն 1866 և 1867 թւերի հաշիւները, իսկ հետեւալ տարիների գումարնե- րի մասին յայտնի չէ ինչի լուծում է։

Հայերը զարմանալի մարդիկ են. գրում են հայ լրագրին մայիսին, փոխանակ յունվարին, կամ մինչև անգամ նախընթաց տարվայ դեկտեմ- բրին գրելու, — և յետոյ դժգոհ են, որ նրանց չեն ուղարկում ամբողջ տարվայ համայնքը ըս- կզրից։ Եթէ կամենում էք ամբողջ տարվայ հա- մայնքը ստանալ, պէտք է վաղօրօք գրելք և ոչ թէ մայիսին գրելով՝ պահանջէք յունվարի համայնքը։ Մենք «Մշակ» ճշմարիտ է տը- պում ենք փոքր ինչ աւելի քան թէ բաժա- նորդ ունենք, բայց չենք կարող յունվա- րին հոգով սրբով խնայել որ մայիսին գրողները կը լինեն ամբողջ տարվայ համար։ Բաժանորդ- ների թիւն աւելանալով, աւելացնում ենք և օ- րինակներ թիւը, բայց այն բոլորից, երբ նոր բաժանորդներ ենք ստանում, և ոչ թէ առաջին

որ ոչ թէ տարիների ընթացքով չէ նստմանում, այլ քանի դեռում տարածվելով աճում է զուգա- հաւասար նրա զարգացող և կատարելագործվող արուեստականութեան հետ։

45 տարի շարունակ վայելելով հասարակու- թեան սէրը, Ալվաղեանը մինչև այժմ էլ մնաց նրա համար իրեն ամենահամակերելի նկարիչ։

Յառաջ քան մամուլը խօսքս երկու վե- րոյիչաւ մեծ պատկերների վրա, որոնք ներկա- յացնում են Ամերիկայի գիւղեր, պարտք եմ հա- մարում ասել, որ Ալվաղեանը իր ազգայն ար- տագրութեանց համար նիւթեր ժողովելու գի- տաւորութեամբ նախ երկու տարի ճանապար- հորդեց իտալիայում և յետոյ իր սովորական, անընկճելի յամառութեամբ ձեռնամուկ եղաւ գործին։ Նրա վրձինը, որ շատ էր աշխատել ծովային տեսարաններ նկարելու, այս անգամ պահանջում էր աւելի լայն գործադրութիւն և մեր երեւի մարինիտը միտք յղանալով նոր իմն անջնջ յիշատակ թողնել գեղարուեստա- կանութեան պատմութեան մէջ, ներդաշնակեց ուղիւստի տարրական երեւոյթները այն պերճ և յանդուգն նաւավորի անուան հետ, որ նոր աշխարհ գտնելով, պատճառ դարձաւ նոր դա- րաշրջի հաստատման ազգերի պատմութեան չը- ջանում։

Այս պատկերները X. Колумбъ на пути въ Америку и Торжественное вступление Колумба на о. Сансальвадоръ անգլիան պատմական նը- շանակութիւն ունեն ոչ լոկ զրա համար, որ նիւթերը պատմական են կամ կոլումբոսի և նրա ուղեկիցների պատկերները ժամանակակից ըն-

համարից, որ նորից չարել ու տպել չենք կարող։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԴԻՑ մեզ գրում են. «Մշակ»- ար յօդուածը, որ արտատպեցաւ «Մշակ»- ան է և որի նպատակն էր հաշիւ պահանջել էջ- միածնից, մեծ ներգործութիւն ունեցաւ այստե- ղի մի անձի վրա, որի մասին ակնարկութիւն կար, թէ նրան յանձնվում են իջմիածնի փո- ղերը Բորսայում խաղալու համար։ Այդ անձը որոնում է՝ այժմ մի գրող, որպէս զի պատաս- խանի «Մշակ» լրագրին, անգագար կրկնելով թէ՛ ինչ փող, ինչ էջմիածին, ինչ կրեւոր, որոն- ղից, ուր...»

Կեզ գրում են ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ հետեւալով. «Այս- տեղի փոստատան մէջ զարմանալի բաներ են պատահում. փոստատան ծառայողները երբ մի գիրք են հանում որ ուրիշ քաղաքից է ստաց- ված, փոխանակ տիրոջը յանձնելու, այդ գիրքը, առանց այլ և այլութեան իրանց համար են պա- հում։ Երբ նամակի ծրարից զգում են որ նրա մէջ ֆոտոգրաֆիական պատկեր կայ, բաց են անում նամակը և լուսանկարը իրանց համար են պահում։ Ես կարող եմ այն տիկիներին և պարոններին ազգանուններն ասել, որոնց անու- նով ուղարկված գրքերն ու լուսանկար պատ- կերները փոստատան ծառայողներին մօտ մնա- ցին, փոխանակ յանձնված լինելու իրանց տէրե- րին։ Եթէ փոստատան կառավարիչը համարձակ- վի հերքում գրել «Մշակին» այն ժամանակ ես կը յայտնեմ այն անձերի ազգանունները, որոնց սեփականութիւնը փոստը իրան է սեփականաց- րել։ Քաղաքի շատ նշանաւոր մարդկանց հետ փոստատանը չէ համարձակվում այս տեսակ բա- ներ անել, այլ միջին դասակարգի մարդկանց հետ։»

ՇԱՄԱԽՈՒՅՑ մեզ գրում են. «Ապրիլի 4-ին Շամախի եկան երկու հոգի միտիոնարական ըն- կերութեան քարոզչներից, որոնցից մինը ամե- րիկացի էր և թուրքերէն լեզու լաւ խմացող՝ իսկ միւսը թուրքացի հայ պ. Գլիգորեան։ Գալուց յետոյ մի քանի օր Գլիգորեան հայերէն քարոզ- չներ մի շարք սկսում է կարգաւ հայ-բողոքա- կանների ժողովաւորում։ Նրա քարոզները այն- քան ճարտար և գրաւիչ են լինում որ ժողովա- րանը լցվում է ոչ թէ միայն հայ-բողոքական- ներով և հայ-լուսաւորչականներով, բայց և ուսուստիստներով, որոնք և նրանց թը- ւում քաղաքագլուխը ներկայ են գտնվում այդ քարոզներին։ Մի անգամ ես ամերիկացի քա- րոզից թուրքերէն լեզուով, քարոզին ներկայ էին և բազմաթիւ թուրքեր։ Քարոզչները իրանց ատենախօսութեան նիւթը թէն վերցնելով սուրբ գրքերից, առաւել իրական կեանքի մտաւոր և բարոյական պահանջների վրա էին խօսում։ Մա-

տիկ պատկերներից են արտագրված, իսկ նաւե- րի արտաքին տեսքը ճիշդ մոզէլներէից, ոչ, այլ գրա համար, որ Ալվաղեանը ինքն զգացել է և քաջ ըմբռնել Կոլումբոսի սրտի կոկիծը, ուրա- խութիւնը, կենդանի ներկերով նկարել է բոլոր սարսափելի խաչնդոսները, որոնց աշխարհա- հաշիւ նաւավորը հանդիպում էր իր նաւագ- նացութեան միջոցին և այն անուանման և խորին հոգեզնայլութիւնը, որ փայլում է նրա երեսին իր քաղցր նպատակին հասնելուց յետոյ։ Ոչ մի ուրիշ գրաւոր նկարագրութիւն այնքան պարզ գաղափար չէր կարող տալ Կոլումբոսի կատարած փառահեղ մեծագործութեան և կրած բազմաթիւ փոխանցների մասին, որոնց զէմ վիճակված էր նրան անդադար մաքառելու։ Առաջինը, յիշեալ երկու հսկայական պատկերներից, ներկայաց- նում է ամերիկացի ծովը և արեւիկոթութիւնը. ա- հագին կոհակները ուղարկվով պատկերի մի ծայ- րից զէպի միւսը, կարծես, պատրաստ են կտա- լից դուրս ցայտելու. մօտայլ երկինքը պատած է մութ ամպերով. ուղիւստի իր անյատակ խո- րութեամբ, անվերջ ճորիջներ, երկինքը մի անհղ գծովային խառնուրդ են ձեւացնում։ Կոլումբոսի Santa Maria նաւը այնքան յարմար յորինված է պատկերի վրա, որ նա բոլոր տախտակաւա- ծով գնողի աչքին է ընկնում. ալեքսերի ուժգին հարուածը նրան սաստիկ խոնարհել է մի կողմ և ջրի փրփրով սրսկել է մի քաղէ և նաւը կորցնելով իր հաւասարակշիւութիւնը, անշուշտ, պիտի խորտակվի անդունդի մէջ, որ մի քանի հա- րկուր անմեղ զոհերի հետ կրանելու է և նաեւ գե- րահաշիւ նաւավորի հիւնաւր քաղափարը։ Տախ-

յիսի 11-ին պարոնները միկնեցան քաղաքից։

Ս. Պետրբուրգի լրագրներում կարգում ենք պաշտօնական հերքումն այն լուրի, իրը թէ Գէ- սէ Գեւորման վիժել է երկաթային թիւղների քըն- նութիւնից երեսում է որ նրա յղովիւնը շարու- նակում է իր բնական և կանոնաւոր զարգա- ցումը։ Պաշտօնական հաղորդութիւնից երեսում է որ կալանաւորվածի հետ շատ լաւ են վարվում բանտի մէջ։

Լրագրները հաղորդում են որ մայիսի 15-ին Ս. Պետրբուրգի քաղաքագլուխը ընտրվեցաւ Գը- լադուհով։ Միւս կառիգաւորները հրաժարվեցան քաւարութեանից։

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այ- սօր, մայիսի 23-ին լինելու է Աթորուտ թաւ- րօնում թիւրքաց Հայաստանից այս օրերս վե- րադարձած պ. Ռոմանիսեանի դասախօսութիւնը հայերէն լեզուով Ռուսերաց Հայաստանի, մա- սին։ Պ. Ռոմանիսեան ցոյց կը տայ իր դասա- խօսութեան ժամանակ թէ վանի կողմերի և թէ Գլիգորեանի հայերի գործած կերպաները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԱՆ

Նորերում Մարտի մէջ կ'օճենիստների մի ցոյց կատարվեցաւ Գեսա Գեւորմանի մահուան պատիժը արգելելու նպատակով։ Ինչպէս հաղորդում են լրագրները, թէ- պէտ այդ նպատակով ժողովը արգելեցաւ Ֆրանսիական պոլիցիայից, բայց այնուամե- նայիւ կ'օճենիստների ցոյցը կայացաւ և աւելի մեծ չափեր ունէր, քան թէ նա նը- կարագրված էր Ֆրանսիական պաշտօնական հաղորդութիւնների մէջ։ Չը նայելով պո- լիցիայի արգելմանը, այն տան առաջ, որ- տեղ պէտք է կայանար այդ ժողովը, հա-ւաքվեցաւ մօտ 3,000 մարդ, որոնք սկե- ցին կուռել պոլիցիայի հետ, այնպէս որ հարկաւոր եղաւ զօրքերի միջամտութիւնը։ Այդ ցոյցին մասնակցողները մի քանի խում- բերի բաժանվեցան, երբ եկաւ յայտնի Պա- ուլա Մինի-կոմունիստ կինը և ամբոյի գլու- խը անցաւ։ Նրա առաջնորդութեամբ աւ- բոյր յեղափոխական ազադաններով անցաւ քաղաքի մէջ։ Հրապարակի վրա խումբերը նորից միացան և մի քանի անձներ սկսեցին

տակամամին տիրել է կատարեալ տագնապ և ա- պստամբութիւն. նաւատարները աշխատում են պինդ բռնվել շուաններից, որ չը գլորվին ջու- րը, մի բանիստները անճարացած ընկած են, ու- րիշները որոմտութեամբ լի մերկացրած սրբով յարձակվում են Կոլումբոսի վրա, որի բարձրա- հասակ և փառաւոր կերպարանքը արժանացած կանգնած է նաւի մի ծայրում. նա այդ միջոցին ցոյց է տալիս (նոցա) ձեռքով՝ ծածանալով դո- շակի վրա, ուր փրկչի խաչելութիւնն է նկար- ված, որով, ինչպէս յայտնի է պատմութիւնից, Ապսիլիայի թագուհի Իզաբելլա Կատարեալը բարի ճանապարհ և յաջողութիւն մաղթեց Կո- լումբոսին։ Ամենայն տեղ մահ և յուսահատու- թիւն է թագաւորում։ Բայց այն իրողութեան մէջն էլ դարձեալ երեսում է նկարչի բանաստեղ- ծական հոգու նրբութիւնը. մինչև անգամ իր սիրե- ցեալ տարրի սարսափելի ալալութեան մէջ եւ նա զիտէ ընտրել միշտ գեղեցիկը ինչպէս, որինակ այս լուսաւոր նշոյլը, որ ձեղքելով մը- աւել ամպերը, ընկնում է նաւի վրա և լուսա-ւորում է տախտակամածը և ալիքները, պատկե- րի վրա առաջին տեղն է բռնում. դա այնպիսի վարպետութեամբ նկարված է, որ այցելուներին շատերը, ցերեկով, սխալմամբ ընդունում էին նրան պատահական նրբա մանող արիւթալից զը- ծի տեղ. այս նշանը, կարծես, մի կերպ նախա- դրուակում էր, որ Կոլումբոսի կորույն օգին ո- ղորմութեամբ Աստուծոյ յաղթող պիտի դուրս գայ մահ և յուսահատութեան անդունդը։

Երբեք Ալվաղեանը, ալեկոծեալ ծովը նկարե- ի, զեւ չէր հասել այնքան կատարելագործու-



